ԱՐՄԱՎԻՐԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ*

Գ. Ա. ՏԻՐԱՑՅԱՆ

1972 թ. հնագիտական աշխատանքները շարունակվեցին Արմավիրի բլրի նախորդ տարիներում սկսված տեղամասերում՝ գագաթի շենքի մերձակայքում, արևմտյան լանջում և հյուսիս-արևմտյան մասում։ Բացված ճարտարապետական մնացորդները և պեղված հնագիտական նյութերը վերաբերում են հիմնականում ուրարտական, հին հայկական և միջնադարյան ժամանակաշրջաններին։

1972 թ. պեղվեց ուրարտական նորահայտ արևմտյան պարսպին հարող հյուսիսային քառակուսին (7Д) (նկ. 1)։ Այստեղ ուրվագծվեց քառանկյունի մի սենյակ, որի հարավային պատը և արևմտյան պատի մի մասը բացվել էին դեռևս պեղումների նախորդ շրջանում (քառակուսի 7C)։ Սենյակը միջնորմային մի պատով բաժանվում էր երկու մասի։ Սենյակի շերտագրական առանձնահատկությունները, նրա մեջ գտնված նյութերը կասկած չեն թողնում, որ այն միջնադարյան ժամանակաշրջանին է պատկանում։ Սենյակից դեպի հյուսիս տարածվում էր նախորդ տարվա պեղումներից մասամբ հայտնի քարե հարթակ, որն իր մի եզրով միանում էր ամրոցի հյուսիսային պարսպին։ Հարթակը, որը հավանաբար անտիկ ժամանակաշրջանի է, վնասվել է միջին դարերում։ Նրա վրա և ստորին մասում, բավականին մեծ խորության վրա, գտնվեց միջնադարյան խեցեղեն։

Վերոհիշյալ սենյակի հիմքերի տակից դուրս եկած խեցեղենը անկասկած հելլենիստական ժամանակաշրջանի է։ Այստեղ ավելի մեծ խորության վրա բացվեց արևմտյան մի պարսպից մյուսը ձգվող ուրարտական զուգահեռ պատերից առաջինի սկզբնամասը։ Բացառված չէ, որ դրա հյուսիսային եզրը օգտագործվել է անտիկ ժամանակաշրջանում։

Պեղումներ կատարվեցին ուրարտական նորահայտ պարսպին հարող նաև մյուս՝ դեռևս չուսումնասիրված քառակուսիներում (6, 7K, 6, 7L), որոնք գտնվում են պարսպի՝ 1971 թ. վերջնականապես բացված № 4 որմնահեցից հարավ։ Այստեղ բացվեց պարսպի շուրջ 11 մ երկարությամբ մի նոր հատված, այդ թվում և նոր որմնահեց (№ 5)։

6, 7K քառակուսու վերևի շերտերից հայտնաբերվեցին անտիկ ժամանակաշրջանի իրեր, տարբեր ձևի կավանոթներ, կավե արձանիկներ, մետաղե գործիքներ ու զենքեր, ինչպես նաև միջնադարյան նյութեր (նաև պղնձե դրամ)։ Պարսպի վերևի եզրից մոտ 0,5 և 0,7 մ խորության վրա երևացին չեչաքարից շարված երկու պատերի հիմքեր։ Դրանք հենվում էին պարսպին (մեկը № 4 որմնահեցի հարավային անկյան մոտ, մյուսը՝ № 4 և № 5 որմնահեցերի միջև ընկած պարսպի հատվածում) և ձգվում էին դեպի արևմուտք, փաստորեն կազմելով մի ուղղանկյուն սենյակ, որը չորրորդ կողմից փակված էր հա-

* Հաղորդում 1972 թ. հնագիտական աշխատանքների մասին։

ռևան քառակուսում ուրվագծվող պատով, թեև վերջինս, դատելով նրա հիմքերի դիրքից, գուցե ավելի վաղ ժամանակաշրջանի է պատկանում։ Մշակութային շերտը այստեղ շարունակվում է նաև վերոհիշյալ երկու պատերի հիմքերից ներքև (սարսպի տակ մոտ 1,7 մ խորությամբ) և հարուստ է անտիկ նյութերով։



Նկ. 1. Արմավիրի միջնաբերդի արևմտյան հատվածի հատակագիծը։

6, 7L քառակուսիներում նույնպես անտիկ նյութը ամենավերևի շերտերից սկսեց երևան գալ, թեև հանդիպեց նաև կարմրագույն եռանկյունիներից կազմված գոտիով ուրարտական կավանոթի մի բեկոր։ Այստեղ բացվող որմնահեցի երկարությունը 4,25 մ է, որի հարավային անկյունից դեպի արևմուտք ձգվում է մոտ 4,8 մ երկարությամբ ավելի ուշ ժամանակաշրջանի պատի հիմք։

Այս քառակուսիների ստորին հորիզոնում գտնվեց սև լաքով պատած կավե սրվակ, որի նշանակությունը Արմավիրի հելլենիստական շերտի թվագրման առումով շատ մեծ է։ Պեղվեցին նաև արևմուտքից հարող մի շարք քառակուսիներ։ Ցնցած բլրի լանջն ի վայր ձգվող քառակուսիների հողի շերտի բարակությանը, այն առատ է հնագիտական նյութերով։ 5J քառակուսին, որն ընկնում է № 4 որմնահեցի դիմաց, հենց սկզբից բազմապիսի խեցեղեն տվեց, այդ թվում գունազարդ անոթի ուշագրավ բեկորներ։ Այստեղ նախորդ տարում բացված խարսխից 5,8 մ հեռավորությամբ հայտնաբերվեց 0,53 մ տրամագծով ուրարտական տուֆե խարիսխ (նկ. 2)։ Այն տեղադրված է արևելքից արևմուտք ձգվող ուրարտական պատի (№ 4) հիմքերի վրա։ Դա խիստ կարևոր է ուրարտական ամրոցի գոյության վերջին ժամանակաշրջանի պատմությունը վերականգնելու համար։ Այս խարսխից դեպի հարավ-արևելք պահպանվել էր ավելի փոքր չափսերի հատած կոնաձև մի այլ խարիսխ, որն, անկասկած, ետուրարտական ժամանակաշրջանի է։

Քառակուսու հյուսիս-արևմտյան մասում գտնվեց հողի մեջ դրված կարաս, որի վերնամասը ջարդվել ու մեջն էր ընկել։ Կարասի մեջ եղած կավանոթների բեկորները, դանակը և ուլունքը որոշակիորեն թվագրվում են հելլենիստական ժամանակաշրջանով։ Կարասի և հարակից պատի շերտագրական փոխհարաբերությունը դժվար է որոշել. հավանաբար պատի հիմքերը դնելիս կարասը ջարդվել է։

Նկ. 2. Ուրարտական խարիսխներ և հելլենիստական պատերի հետքեր։

5K քառակուսին ևս շատ բարակ շերտ ունի. այնտեղ գտնվեցին խեցեղեն ու կավե արձանիկի բեկոր։ Այս քառակուսում նույնպես բացվեց ուրարտական խարիսխ (տրամագիծը՝ 0,65 մ). այն արևմտյան լանջի երկու պարիսպների միջև ընկած տարածությունում տասներորդն է։

Նախորդ տարի պեղված 5H և 5i քառակուսիներում պեղումները շարունակվեցին մինչև խիճը։ 5H քառակուսում վերացվեցին ուրարտական № 3 պատի վրա նստած կլորավուն մի այլ պատի հետքեր։ Այդ ընթացքում երևաց, որ ուրարտական պատի մի հատվածը քանդված է եղել դեռևս հելլենիստական ժամանակաշրջանում։ Քանդված մասում, պատի մակարդակից ներքև, գտնվեցին նույն այդ ժամանակաշրջանին վերաբերող նյութեր։ Բացվեց ուրարտական պատի հյուսիսային եզրը, որով պարզվեց պատի լայնքը՝ 2,8 մ։ Այս պատի հետքերը երևացին նաև բլրի լանջն ի վայր տեղադրված քառակուսիներում, ավելի ցածր մակարդակի վրա, որով այն աստիճանավոր տեսք ստացավ։ Մյուս քառակուսում ևս (5i) ուրարտական պատի հիմքերից ներքև ևս երևան է դալիս հելլենիստական ժամանակաշրջանի նյութ՝ բացառությամբ ուրարտական կարասի բեկորի։

Ամրոցի հյուսիս-արևմտյան մասում, մուտքի մոտ, մյուս սենյակները պեղելու նպատակով հողից մաքրվեց 1970 թ. ընթացքում բացված ուրարտական



Նկ. 3ա. Հելլենիստական ժամանակաշրջանի նյութեր։

երկու սենյակներին հարող տարածությունը։ Հենց սկզբից բացվեց վառված եղեգի շերտով ուրարտական աղյուսե մի պատ, որի մեջ և քառակուսու մյուս մասերում կան միջնադարյան ժամանակաշրջանի իրվածքներ (հավանաբար կացարանների հետքեր), խեցեղենի բազմաթիվ բեկորներ։ Այդ շերտից դուրս է գալիս նաև անտիկ խեցեղենով ուրարտական նյութ։ Խորանալիս պարզվեց, որ աղյուսե պատը վերևից թափված է, ուստի պեղողները առաջնորդվեցին սենյակի քարե պատերով։ Սենյակը քառանկյունի է (5,4×3,6 մ)։ Հասանք խճի շերտին, որով լցված է հատակաբեռ սենյակի հարավային մասը (հաստությունը՝ 0,1—0,5 մ)։ Այն լցված է սենյակի հատակը հարթեցնելու կամ հատակի նոր մակարդակ ստեղծելու նպատակով։ Խճի շերտի տակ ընկած ամուր հողի մեջ հնագիտական ոչ մի նյութ չգտնվեց։

Գագաթի շենքի հյուսիս-արևելյան անկյունում բացվեց արևելքից արևմուտք ընկած մի պատ՝ շարվածքի մեջ բազալտե մշակված քարերով, որոնք

ծիծեռնակապոչի նմանվող փոսիկներ ունեն։ Պատը միջնադարյան է և պատկանում է շենքի շուրջը դասավորված կացարաններին, որոնք կառուցելիս օգտվել են նաև հելլենիստական ժամանակաշրջանի քարերից։ Բացվեց նաև գագաթի շենքի արևելյան պատի վերջին շարքը։ Շենքին կից բացվեցին քարից և կրից կազմված հարթակի հետքեր։



Նկ. 3բ. Հելլենիստական ժամանակաշրջանի նյութեր։

Վերևի շերտերում միջնադարյան նյութը հանդես է գալիս անխառն ձևով՝ արևմտյան տեղամասի հյուսիսային քառակուսիներում, ինչպես նաև գագաթի շենքի շրջապատում։ Մյուս տեղերում այն հանդիպում է անտիկ կամ ուրարտական նյութի հետ միասին։ Միջնադարյան շերտի թվագրմանը նպաստում են գտնված պղնձե դրամները։ Դրանցից մեկը, դրամագետ Խ. Մուշեղյանի կարծիքով, սելջուկյան է և թվագրվում է XIII դ. սկզբով։ Հնագիտական նյութի գերակշռող մասը խեցեղեն է և ներկայացված է զանազան

կենցաղային կավանոթների բեկորներով։ Ուշադրության արժանի են գորշ, մոխրագույն կամ բաց գույնի երկկոնաձև միկանթանի լայնափոր կճուճները, ռելիեֆ և փորագիր զարդերով միկանթանի մեծ սափորը, հաստապատ տաշտը, ձեռածեփ սաջը՝ հավանաբար երկու բռնակով, պնակների և քրեղանների բեկորները։ Հիշատակելի են նաև գոտեզարդ ու դաջազարդ կարասների բեկորները, որոնց զարդերը խաչաձև են կամ աստղաձև։ Ուշագրավ է փորագիր և ռելիեֆ զարդերով պնակի բեկորը, որն իր նմանն ունի նաև նախորդ տարիների պեղածոներում և հիշեցնում է պարթևական խեցեղենի որոշ տեսակներ։ Առանձին խումբ է կազմում ջնարակած խեցեղենը՝ բաց կանաչավուն և գորշագույն զարդերով քրեղանի բեկորը, կապտավուն, թռչունների պատկերներով թասի հատակը, ճրագը և հախճապակյա անոթի (շողյուն) բեկոր։ Գտնվեցին նաև ապակյա ապարանջանների մի քանի բեկորներ՝ եղևնաձև զարդերից կազմված գոտիներով, հավանաբար շենքի հարդարանքի քարե մասեր և այլն։



Նկ. 34. Հելլենիստական ժամանակաշրջանի նյութեր։

Հին հայկական շերտը, որը հիմնականում հելլենիստական ժամանակաշրջանին է վերաբերում, նյութերի հարստությամբ ու բազմազանությամբ

ամենանշանակալիցն է Արմավիրում։ Խեցեղենից բացի ուշագրավ են նաև մետաղյա իրերի հավաքածուն, կավե արձանիկների բեկորները և քարե իրերը, որոնք նոր լույս են սփռում Արմավիրի զարգացած արտադրական կյանքի և փոխանակային կապերի վրա։

Խեցեղենը ներկայացված է բազմաթիվ հին, ինչպես նաև մի քանի նոր ձևերով։



Նկ. 3դ. Հելլենիստական ժամանակաշրջանի նյութեր։

Կարասներ. ուշագրավ է հողի մեջ կիսով չափ թաղված կարասը, որի մեջ գտնվեցին բազմաթիվ իրեր։ Կարասը վնասված էր, բայց այն հաջողվեց ամբողջացնել (նկ. 4)։ Այն բաց կարմրավուն է, ունի վերևից հարթ ու դեպի դուրս ցցված ոչ շատ հաստ շրթերով բավականին լայն բերան, կարճ վիզ, որի տակից իրանը շեշտակիորեն հաստանում է և աստիճանապես նեղանալով անցնում բավականին փոքր հատակին։ Կարասների նման շրթեր հանդիպում են հաճախակի և թերևս հանդիսանում են Արմավիրի հելլենիստական ժամանակաշրջանի կարասների ամենատարածված ձևերից մեկը (նկ. 3ա)։ Մի բավականին մեծ բեկորի վրա կան նշաններ, մեկը կլորավուն՝ մեջը թաց կավի վրա արված խաչ, իսկ մյուսը եռաժանիքի նման՝ փորագրված։ Մի առանձին խումբ են կազմում բաց վարդագույն, մոխրագույն և գորշագույն ավելի

բարձր թեք շուրթերով կարասների բեկորները։ Սրանցից մեկի մեջ գտնվել է մայր ու երեխա պատկերող կավե արձանիկ։ Հիշատակելի են նաև կարասի ռելիեֆ գոտու կլոր փոսիկներով բեկորները։

Սափորներ. սրանք Արմավիրում հաճախ հանդիպող սովորական տիպի բաց մոխրագույն միկանթանի անոթներ են։ Եռաթերթաձև բերան ունեցողները (ծորակի մասը կլորավուն) հիշեցնում են հունական նախատիպերը, իսկ սրածայր ծորակավորները նման են ուրարտական նմուշներին։

Կճուճներ. դրանք երկու հիմնական տիպի են՝ խոհանոցային և տնտեսության մեջ տարբեր կիրառություն ունեցող բաց գույնի անոթներ։ Վերջիններից մի քանիսը ներսից և դրսից ծածկված են Արմավիրի օրինակներին բնորոշ կարմիր և սրճագույն ներկով։

Տափաշշեր. այս անոթները բավականին հետաքրքիր հավաքածու են կազմում։ Պահպանվել են կանթերով և բերաններով բազմաթիվ բեկորներ։ Դրանցից մեկը ոչ ուռուցիկ իրանով տափաշշի է (նկ. 3գ)։

Ծորակավոր անոթներ. տարբերվում են ըստ իրենց ձևի, գույնի և այլ հատկանիշների, հիմնականում կազմված են երկու խմբից։ Առաջին խմբին են պատկանում լայն բերանով, դեպի դուրս թեքվող կլորավուն շրթով, հաստացող իրանով կճուճանման անոթները, որոնք բաց օխրագույն են։ Ծորակը չնայած կպած է անմիջապես շրթին, բայց տարբերվում է դասական եռաթերթաձևերից։ Մյուս խումբը կազմված է սափորանման անոթներից, որոնք հաստիրան են, բայց ունեն ավելի փոքր, հաստացող շրթեր, տափակ, անկյունավոր, համեմատաբար փոքր կանթեր։ Ծորակները դասական եռաթերթաձև են։ Սրանք վերևի մասը կարմրավուն, բնորոշ գույնով ներկված շատ ավելի որակյալ անոթներ են (նկ. 5)։

Թասեր. մի քանի տիպի են։ Հանդիպում են Արմավիրում լայն տարածում գտած պրոֆիլավորված շրթերով, խաչազարդ, բաց գույնի թասեր։ Ինքնուրույն նոր խումբ են կազմում կլորավուն եզրով, ներս թեքված շրթով ու հարթ հատակով թասերը, որոնք իրենց զոգահեռներն ունեն Արտաշատի և Օշականի հելլենիստական ժամանակաշրջանի նյութերում։ Ներճկված զարդերով ու գույնի թասի հատակի բեկորը նույնպես հիշեցնում է Գառնիի համապատասխան նմուշները, իսկ դեպի դուրս ծռված շրթով և փորագիր զարդերով նրբախեցի թասը առայժմ նմանը չունի Հայաստանի նյութերում։

Քրեղաններ. բացառությամբ մեկի՝ սովորական տիպի են, բայց տարբեր չափերի։ Կան խաչազարդ կամ դրսից և ներսից ներկով պատած օրինակներ։

Ըմպանակներ. տարբեր տիպերի ու չափերի են։ Դրանցից մեկը՝ խիստ պրոֆիլավորված պսակով ու դեպի հատակ ընդգծված անցումով, նման է 1972 թ. Արտաշատից պեղվածին։ Ըստ գույնի ըմպանակները բաժանվում են կարմիր, սրճագույն և սև փայլեցրած խմբերի։

Հանդիպում են սկահակների, ճրագների, ալաբաստրոնաձև անոթների, կիսագնդաձև գավաթների բեկորներ, որոնք հայտնի են Արմավիրի նախորդ տարիների պեղումներից։

Վերջին տարիներին Արմավիրում գտնվել են ջնարակած անոթների բեկորներ, որոնց նկատմամբ հետաքրքրությունը մեծ է, քանի որ մինչև վերջերս Հայաստանի անտիկ դարաշրջանում ջնարակի օգտագործման մասին շատ քիչ բան գիտեինք (Գառնի)։ Այժմ միայն Արմավիրի պեղումներից հայտնի

է բավականին ուշագրավ մի հավաքածու, որը լրացվում է Հայաստանի մյուս անտիկ հուշարձանների նյութերով։



Նկ. 4. Հելլենիստական ժամանակաշրջանի կարաս։

Արմավիրում 1972 թ. գտնված ջնարակած նմուշներից մեկը ցածր, ուղիղ, բարակ եզրերով և հարթ հատակով թաս է (նկ. 3գ)։ Շուրթը վերևից և հատակը ներսից շրջակենտրոն նեղ ակոսներ ունեն։ Արտաշատի թասերի օրինակով այն հավանաբար ունեցել է կլոր ոտք։ Մյուս անոթը փոքր տափաշիշ է։ Երկու կողերի միացման տեղը ամբողջ շրջագծով մեկ ներճկված է, իսկ կողերը զարդարված են շրջակենտրոն նեղ ակոսներով։ Ջնարակված փոքր տափաշշեր հայտնի են Սիսիանի մ. թ. ա. I դ. իշխանական դամբարանից և Հայաստանի տարածքում արված այլ պատահական գյուտերից։ Այդպիսի տա-

փաշշեր հայտնի են նաև Իրանից. մեկը գտնվել է Իրանի հյուսիս-արևմուտքում՝ Շուշում (Սուզա)։ Այն պատրաստված է ֆայանսից և թվագրվում է մոտավորապես պարթևական ժամանակաշրջանով[1]։ Մյուսը, որը գտնվել է Իրանի հյուսիս-արևմուտքում, շատ ավելի նման է Արմավիրի օրինակին, քանի որ կողերի միացման տեղում ունի բնորոշ ներճկում[2]։

Նկ. 5. Հելլենիստական ժամանակաշրջանի ծորակավոր ջրաման։

Արմավիրում գտնված երկու անոթների ջնարակը կապտականաչավուն է. տեղ-տեղ արծաթափայլ, կավը դեղնագույն է, համեմատաբար մաքուր։

[1] M. Dieulafoy, L'acropole de Suse, p IV, Paris, 1892, նկ. 267։
[2] Catalogue of Iranian Art Expedition, Tokyo, 1971, № 112.

Հայտնի է, որ Արմավիրի ինչպես և Հայաստանի հելլենիստական ժամանակաշրջանի մշակույթին խիստ բնորոշ է գունազարդ խեցեղենը։ Այս տեսակետից ուշագրավ են թասերի և տափաշշերի բեկորները։ Թասերն ունեն գունազարդված շուրթեր, սև գույնով արված թեք գծեր կամ սրճագույն, արաբական երեք թվանիշը հիշեցնող նշաններ, իսկ տափաշշերը՝ շրջակենտրոն և խաչաձև կարմրագույն գոտիներ։ Ներկված է քրեղանների, ըմպանակների, ծորակավոր ջրամանների մի մասը։ Ստկայն առանձնահատուկ տեղ է գրավում ալիքաձև, գոտիանման, թռչնակերպ սրճագույն և կարմիր նախշերով կիսագնդաձև գավաթը (նկ. 3գ)։

1972 թ. Արմավիրում գտնված խեցեղենի մեջ կա նաև մի ներմուծված սրվակ։ Այն պատկանում է, այսպես կոչված՝ բալզամարիումներին՝ օծանելիքների անոթների շարքին. ունի նեղ ու բարակ ոտք, ուռուցիկ իրան, նեղ ու բարձր վիզ և թեթևակիորեն դեպի դուրս ծռվող շրթեր։ Կավը դեղնավուն է, մաքուր ու խիտ, լավ հունցած և թրծած (նկ. 6)։ Նրա առանձնահատկությունն այն է, որ իրանը դրսից պատած է հունական խեցեգործությանը բնորոշ սև լաքով։ Սրվակի մյուս առանձնահատկությունները, հատկապես ձևը, թույլ են տալիս այն հաստատապես թվագրելու վաղ հելլենիստական ժամանակաշրջանով, հավանաբար մ. թ. ա. III դ.։ Ստույգ ասել թե որտեղից է բերված սրվակը, առայժմ դժվար է։ Հնարավոր է, որ այն պատրաստվել է արևմտյան Փոքր Ասիայի հելլենիստական կենտրոններից մեկում։

Գտնվեցին նաև կավե արձանիկների բեկորներ։ Դրանցից երկուսը հաստատապես հելլենիստական շերտից են։ Մեկը պատկերում է ձախ ձեռքով ծծկեր երեխային գրկած մորը, որը կրում է մեջքին իջնող երկար գլխաշոր. մազերը վերարտադրված են զուգահեռ, ոչ խորը ակոսներով (նկ. 7)։ Դեմքի մասերը ցցուն են։ Հայացքն ուղղված է առաջ։ Արձանիկը զանգվածեղ է, կարմրավուն կավը միատարր է, մաքուր ու լավ թրծված, մակերեսը պատած է կանաչավուն-դեղնավուն անգորով։ Հագուստի և մարմնի վրա կան կարմիր գույնի ներկի հետքեր։ Արձանիկը պատկերում է մայր աստվածուհուն, որի պաշտամունքը լայն տարածում ուներ հելլենիստական Արևելքում։ Այն ոճով այնքան էլ մոտ չէ անտիկ արվեստին։ Եթե այն Հայաստանում չի պատրաստվել, ապա բերվել է Փոքր Ասիայից, որտեղ ևս մայր աստվածուհու պաշտամունքը շատ էր տարածված։

Մյուս բեկորը պատկանում է նման արձանիկի ներքևի մասին՝ սնամեջ պատվանդանով, վերևից կոհույքի ոտքի նման զարդերով և հագուստի ծալքերով, որոնք հանգչում են պատվանդանի վրա։ Երկու այլ արձանիկների բեկորներ, մեկը ոտքի թաթի ձևի, իսկ մյուսը անորոշ, ավելի դժվարությամբ են բնորոշվում։

Քարե իրերը որոշակի տեղ են գրավում Արմավիրում։ Այստեղ բավականին լայն տարածում էին ստացել մուգ կանաչավուն լավ հղկված քարից պատրաստված սկահակները։ Գտնվել են շրթի մասերը (սովորական տիպի), ինչպես նաև բավականին զանգվածեղ ոտքի բեկորը։ Հանդիպում են նաև խորանարդաձև քարե կոկիչներ, որոնք, հավանաբար, կիրառվել են բրուտագործության մեջ։

Մետաղյա իրերը հստակորեն ստորաբաժանվում են աշխատանքային գործիքների և զենքերի (նկ. 3դ)։ Բացառությամբ բրոնզե կոճակի, որի

պատկանելիությունը հելլենիստական շերտին այնքան էլ պարզ չէ, մետաղյա զարդերեն չհայտնաբերվեց։

Երկաթե կացինաձև իրը նման է 1971 թ. գտնվածին, որի մի ծայրը թոնրի քերիչ էր, իսկ մյուս ծայրը վեռ՝ թոնրից հացը հանելու նպատակով արված։



Նկ. 6. Հելլենիստական ժամանակաշրջանի կավե սրվակ։

Ուշադրության արժանի է անտիկ կարասի մեջ գտնված մի սայրանի հաստ կոնակով դանակը, որի դատտապանը և շեղբը տրոշ անկյան տակ են իրար միացել։

Զենքերից հիշատակելի են նետասլաքները, որոնք բոլորն էլ երկաթից են և պոչուկավոր։ Նետասլաքներից մեկը երկթևանի է, մյուսը, հավանաբար, քառանիստ, փսկ երրորդը՝ տերևանման, խիստ փոքր չափսերի։

Նկ. 7. Հելլենիստական ժամանակաշրջանի կավե արձանիկ։

Զարդերեղեն քիչ հանդիպեց։ Գտնվածները որպես կանոն գնդաձև սերդոլիկից պատրաստված ուլունքներ են։ Այս ուլունքները ժամանակագրական լայն տարածում են ունեցել ու հանդիպում են նաև հելլենիստական ժամանակաշրջանում։ Դա երևում է նաև այն հանգամանքից, որ նման մի հուլունք գտնվեց հաստատապես հելլենիստական ժամանակաշրջանով թվագրվող կարասի մեջ։

Ինչպես արդեն երևաց պեղումների նկարագրությունից, ուրարտական հնագիտական նյութը վատ է պահպանվել։ Դա գլխավորապես բացատրվում է այն հանգամանքով, որ հելլենիստական ժամանակաշրջանում կյանքը Արմավիրում շատ աշխույժ բնույթ է ունեցել, որի ընթացքում տուժել են նախորդ ժամանակաշրջանների նյութական մնացորդները։ Գտնված իրերը, ավելի ճիշտ բեկորները, հայտնի տիպերի կավանոթների մնացորդներ են։

Արմավիրի ուրարտական շրջանի խեցեղենի համար բնորոշ են նաև կարմիր ներկով լցված և աններկ, դժգույն եռանկյունիներից կազմված դոտիներով կարասները, ինչպես նաև նեղ զուգահեռ ակոսներով հարդարված անոթները։ Սրանք ծածկված են լավ փայլեցված կարմրավուն ներկի թանձր շերտով։ Հիշատակելի է նաև եռանկյունաձև պոչուկի տեղ երկու ելուստներով օրսիդիանե նետասլաքը։ Այս տիպի սլաքները կարող են թվագրվել մ. թ. ա. III հազարամյակով, բայց գալիս հասնում են մինչև մ. թ. ա. XIII—XII դդ.։

Արմավիրի ընդերքի ուսումնասիրման ուղղությամբ կատարված քայլը մոտեցնում է պեղումների օգնությամբ ուրվագծվող միջնաբերդի ու քաղաքի թեկուզև մոտավոր պատկերի վերականգնմանը։ Հնագիտական աշխատանքների շնորհիվ Արմավիրի անցյալը, հատկապես հելլենիստական ժամանակաշրջանում, հետաքրքիր լուսաբանություն է ստանում, որը թույլ է տալիս նորովի դիտելու Հայաստանի հնագույն մայրաքաղաքներից մեկի պատմությունը։

РАСКОПКИ АРМАВИРА

Г. А ТИРАЦЯН

Резюме

Раскопки 1972 г. выявили средневековый, эллинистический и урартский слои, характеризующиеся строительными остатками и археологическим материалом.

Особенного внимания заслуживает эллинистический слой, в котором были обнаружены разнообразная керамика, металлические и каменные изделия. Встречаются также фрагменты терракотовых статуэток. Чернолаковый привозной бальзамарий позволяет отнести нижние горизонты эллинистического слоя к III в. до н. э.